ԱՎԵՏԻՍ ԱՀԱՐՈՆՅԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԻՄԱՆԿԱՐԸ

ԼԱՐԻՍԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Հաւատա, հայրենիք, վիրաւոր ու արիւնաքամ, դուն դարձեալ պիտի ապրիս վասնզի անապատների՝ բոլոր ոռնացող խուժաններն իսկ անզոր են սպանել լոյսը, որ մի բարի աստուած, մի գթոտ սպանուած մի օր քո կարկառուն բազուկների մեջ դրեց, ո՛վ դու լոյսի հայրենիք, լոյսի հայրենիք ...

Ավ. Ահարոնեան

Ավետիս Ահարոնյանը ազգային, հասարակական-քաղաքական գործունեությամբ ծնունդն էր իր ապրած պատմական ժամանակաշրջանի, գլխավորապես՝ 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբներին Արևմտյան Հայաստանում թուրքական բռնապետության սկսած ցեղասպանության, 1910-ական թվականներին պատմական Հայաստանի անկախության հետ կապված հույսերի, իսկ այնուհետև նաև՝ մեր հայրենիքի ինը տասներորդ մասի հափշտակության ու կորստի մրմուռների:

Ահարոնյանը մինչև ուղնուծուծը ժողովրդի տառապանքներով, հույսերով ու երազանքներով ապրող գրող ու ազգային գործիչ էր: Ուստի և' գրչով, և՛ քաղաքական գործունեությամբ նվիրվեց օտար տիրապետությունից հայրենիքի ազատագրության գործին, սակայն մոլորվեց դիվանագիտական խարդավանքների լաբիրինթոսում, դատապարտեց մեծ տերությունների ստոր ու երեսպաշտ դավերը հայ ժողովրդի նկատմամբ, ստիպված եղավ խզել կապերը հարազատ երկրի՝ Խորհրդային Հայաստանի հետ:

Սակայն նա մինչև վերջ հավատում էր հարազատ ժողովրդի լուսավոր ճակատագրին: Այսպես՝ 1934 թ. փետրվարի 11-ին Մարսելում ելույթի ժամանակ, որը վերջինը եղավ նրա կյանքում, Ահարոնյանն ասաց. «.... ժողովուրդ հայոց, գիտցիր, որ սպասման ժամանակն է այս: Հավատա, որ պիտի վերադառնաս քո պապերի՝ արիարանց քաջերի երկիրը, եկել ենք այստեղ չմնալու համար, եկել ենք վերադառնալու համար: Մենք գաղութների մեջ պիտի դառնանք ամրապնդման և զորացման մեկ-մեկ ազդակներ մեր հայրենիքի համար, որ կա

Արարատյան աշխարհի մեջ... Հյուր ենք այստեղ։ Ու դատ ու դատաստան ունենք... Մեր Հայրենիքը կա, առանց որի ոչ գաղութ կա, ոչ մենք կանք»[1]։

Ի. Ստալինի մահից որոշ ժամանակ անց, երբ հնարավոր դարձավ խոսք բացել 1920-ական թվականների սկզբներին տանուլ տրված Հայկական հարցի մասին, դրա մեղավորներից մեկը համարվեց Ավետիս Ահարոնյանը։ Որպես ՀՅԴ կուսակցության ակնառու դեմքերից մեկը, նա ամենաակտիվ մասնակցությունն էր ունեցել ազգային, քաղաքական կյանքի բուռն իրադարձություններին, միջազգային վեհաժողովներում ներկայացրել հայ ժողովրդի շահերը։

Զբաղեցնելով Հայոց կենտրոնական ազգային խորհրդի, ապա Հայաստանի Հանրապետության խորհրդարանի նախագահների բարձր պաշտոնները՝ նա նաև գլխավորել է հայկական պատվիրակությունները Կոստանդնուպոլսի հայ-թուրքական բանակցություններում (1918), Փարիզի խաղաղության խորհրդաժողովում (1919), Լոնդոնի (1921) կոնֆերանսում, ստորագրել Սևրի դաշնագիրը (1920)։ Մինչև այժմ դեռևս ոչ ոք ծանրակշիռ փաստարկներով չի որոշել Ա.Ահարոնյանի մեղքի բաժինը Արևմտյան Հայաստանը կորցնելու գործում, լուրջ պատասխան չի տվել այն հարցին, թե ինչ պետք է աներ նա, որ չարեց՝ փրկելու մեր հայրենիքի մեծագույն մասը։

Մյուս կողմից՝ ներկա պատմական ժամանակաշրջանում անհրաժեշտ է օբյեկտիվ ուսումնասիրել փաստերը, անկողմնակալ վերլուծել տվյալ ժամանակի իրադարձությունները, հնարավորությունները և հաշվի առնել մի պարզ ճշմարտություն. ժողովրդի ճակատագրի վրա հետքեր թողած անհատներին ներբողելու կամ նշավակելու համար ելակետ չէ նրանց կուսակցական պատկանելությունը, ելակետը նրանց գործունեության սառնասիրտ, աննախապաշար վերլուծությունն է։

* * *

Ավետիս Ահարոնյանը ծնվել է 1866 թ. հունվարի 4-ին, Մասիս սարի ստորոտում գտնվող Իգդիրմավա գյուղում (Սուրմալուի գավառ)։ Ահա թե ինչ է իր ծննդյան առիթով հետագայում գրում Ահարոնյանը. «Ճակատագիրն ուզեց, որ ես ծնուեմ Մասսի լանջերին, Հայոց աշխարհի տիտանի ոտքերի տակ, ուր գալիս են մեռնելու մեր հայրենիքը ծուատող գարշելի սահմանները, մահահոտ ու ախտամէտ օձերի պես, թողնելով Հայոց Հսկան աննկուն եւ Ազատն Մասիս»[2]։

11-12 տարեկան երեխա էր նա, երբ ականատես եղավ թուրքական հինգդարյա արհավիրքի եղկելի դրվագներից մեկին։ 1877-78 թթ. ռուս-թուրքական պատերազմը լիակատար ազատություն էր տվել օսմանյան յաթաղանին՝ դեպի ռուսական սահմանն ուղղելով կոտորածներից սարսափահար արևմտահայ խաղաղ ազգաբնակչությանը։ Հետագայում Ա.Ահարոնյանը «Իմ գիրքը» հուշագրության մեջ վերհիշում է. «Ու օրերով, շաբաթներով, ամիսներով գալիս էին զուլումից մազապուրծ բեկորները, դողդոջուն մանուկներ, այծյամների պես խրտնած աղջիկներ, երկու տակ ծալված ծերեր ու պառավներ, որ մրմնջում էին այլևս անիմաստ դարձած աղոթքներ, իրենց պատիվը հայերի նվիրական աճյունի պես գրկած մատաղ հարսներ՝ թանձր քողը երեսներին, խոշտանգված, վիրավոր տղամարդիկ ... Ուշակորույս մարդկանց այս բազմությունը, ինչպես կենդանի և փրփրուն

[1] **Գ. Լազյան,** Դեմքեր Հայ ազատագրական շարժումէն, Կահիրե, 1949, էջ 186:
[2] «Ազդակ», հունվար, 1948, Բեյրութ:

ցավի հորձանք թափվում էր մեր գյուղը։ Գոմ ու մարագ, ավեր ու շենների մեջ ծվարում էին՝ ով ինչպես կարող էր ... Մանուկ հոգիս էր սրթսրթում այս զուլումի թևերի շրջյունից»[3]։

Այդ սարսափելի, մանկական ընկալումներին հաջորդում է գիտակցական իմաստավորումը, երբ «Կարմիր սուլթան» Աբդուլ Համիդը 1895-1896-ին սրի է քաշում ավելի քան երեք հարյուր հազար հայերի՝ այդ ձևով պատասխանելով Հայկական հարցը «բերանի ծամոն» դարձրած եվրոպական երկրների երեսպաշտ ու անբարո դիվանագիտության «արդարամտությանը»։

1886 թ. Էջմիածնի Գևորգյան ճեմարանն ավարտած և ուսուցչի գործունեությունն ընտրած Ահարոնյանը վաղ շրջանի ստեղծագործություններում ներկայացնում է իր տառապյալ ժողովրդի ցավը, հայ գաղթականության ողբերգությունը։

«Մեր յեղափոխական շարժումը, - գրում էր «Դրոշակը», - անըմբռնելի պիտի ըլլար առանց Ա.Ահարոնյանի շեփորին։ Եթե Խ.Աբովյանը հիմնադիր հանդիսացաւ յեղափոխաշունչ գրականութեան, եթե Րաֆֆին երազեց մեծ գալիքը և լուսեղէն ճամբաներ գծեց և դիւցազնավէպ հերոսներու համար, Ահարոնեան տեսաւ հայ ֆետային, որ զէնքը ձեռին կը նահատակուէր հայոց լեռներուն վրայ։ Այն հայ վիշտ դիւցազնագրեց և պայքարի մարտահրավէր հնչեցուց հաւասար խանդավառութեամբ»[4]։

Բարերարների օգնությամբ 1898 թվականին Ահարոնյանն անցնում է Շվեյցարիա և ընդունվում Լոզանի համալսարանի պատմափիլիսոփայական բաժանմունք։ 1901-ին ավարտելով Լոզանի համալսարանը՝ անցնում է Փարիզ և մեկ տարի մասնակցում Սորբոնի համալսարանի գրականության դասընթացին, ապա, վերադառնալով Անդրկովկաս, երեք տարի վարում «Մուրճ» ամսագրի գրական բաժինը։

Ինչպես պարզվում է՝ «Ա.Ահարոնեան 1898-ին անցնելով Եւրոպա կսկսի աշխատակցիլ «Դրօշակ»-ին «Ղարիբ» ստորագրութեամբ»[5]։

1906 թ. օգոստոս-սեպտեմբերին Ահարոնյանը պատգամավորի մանդատով մասնակցում է Կովկասի Հայոց Ազգային ժողովին։ Խրիմյան կաթողիկոսի կոնդակով Էջմիածնում հրավիրվել էր շուրջ 60 ներկայացուցիչների «Ռուսահայոց Կեդրոնական ժողովը», որը, փաստորեն, Սահմանադիր ժողովի դեր ուներ։ Կովկասահայության ներկայացուցիչները ծրագրում էին ստեղծել իրենց դպրոցական, մշակութային նոր կազմակերպությունը Սիմոն Զավարյանի նախագահությամբ։ 1907 թ. Մկրտիչ Ա.Վանեցի կաթողիկոսի կարգադրությամբ Ահարոնյանն անցնում է Եվրոպա, որտեղ խմբագրում է «Հառաջ» թերթը։ Նա Փարիզում հայանպաստ գործունեություն է ծավալում՝ իր շուրջը համախմբելով Ֆրանսիայի նշանավոր դեմքերին՝ Կլեմանսո, Ժորես, Պրեսանսե, Քիյար, Լոնգե, Դորիան և ուրիշներ, ապա անցնում Հոլանդիա՝ Լահեի միջպետական ժողովում ներկայացնելու հայոց խնդիրը, 1907-ին Հայկական պատվիրակության կազմում մասնակցել է Հաագայի խաղաղության կոնֆերանսին, ներկայացրել Հայկական հարցի լուծման խնդրագիրը։

1907 թ. վերադառնալով Կովկաս՝ մինչև 1909 թվականը Ահարոնյանը Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի տնօրենն էր, որը Գևորգյան ճեմարանից հետո ռուսահայերի երկրորդ մեծ վարժարանն էր Անդրկովկասում։ Նա իր մանկավարժական փորձով և հեղինակությամբ դպրոցում վերահաստատեց լիակատար կարգապահություն և անդորր։

1909 թվականին Ահարոնյանը հայտնի «Դաշնակցության գործով» ձերբակալվում և իր ընկերների հետ պահվում է Բաքվի բանտում, ապա հիվանդության պատճառով

[3] **Ա. Ահարոնյան,** Իմ գիրքը, Վենետիկ, Ս.Ղազար, էջ 67։
[4] «Դրօշակ», փետրվար, 1930, N 2։
[5] Նույն տեղում։

տեղափոխվում բանտի հիվանդանոց։ Մինչև 1911 թվականը արգելափակվելով Նովոչերկասկի բանտում՝ դրամական երաշխավորությամբ ազատվում է, իսկ հետո անցնում Եվրոպա։

1912 թ. սկսվում է Բալկանյան պատերազմը, նորից արծարծվում է Հայկական հարցը, ուստի Ահարոնյանը իր ընկերների հետ վերսկսում է «Պրօ Արմենիա»-ի հրատարակությունը Պրեսանսեի և Վիկտոր Բերարի խմբագրությամբ։

1914 թ. սկսվում է Առաջին համաշխարհային պատերազմը, բացվում՝ Կովկասյան ճակատը։ Ռուսական բանակը հայ ժողովրդի երկու հատվածների օգնությամբ նորից ռազմական գործողություններ է սկսում Արևմտյան Հայաստանում։ Ավետիս Ահարոնյանը իր հարյուրավոր համախոհների հետ վերադառնում է Կովկաս, սակայն, քանի որ հիվանդ էր, երկար ամիսներ բուժվում է Բաքվում և Թիֆլիսում։ Նա Թիֆլիսում ներգրավվում է ազգային գործերում։ 1916 թ. մի շարք հայ քաղաքական կուսակցություններ և հոսանքներ քայլեր են ձեռնարկում համազգային մեկ մարմին ստեղծելու ուղղությամբ։ 1917 թ. սեպտեմբերի 29-ից հոկտեմբերի 13-ը Թիֆլիսում տեղի ունեցած Արևելահայերի համագումարում ստեղծվում է Հայոց ազգային խորհուրդ, որի նախագահ է ընտրվում Ա.Ահարոնյանը։

Ըստ էության, նա վերսկսում է իր քաղաքական գործունեությունը, երբ տապալվել էր ցարիզմը, հայ գաղթականները նահանջում էին Վանից, Երզնկայից, Էրզրումից դեպի Կովկաս։ Դրությունը ծանր էր, անհրաժեշտ էր փրկել հայության մնացորդներին վերջնական բնաջնջումից, կազմակերպել բանակ, հայ երիտասարդությանը ոգևորել, նրանց պայքարի կոչել մահացու վտանգի դեմ։ Ահարոնյանը այդ դժոխային օրերին արեց ինչ հնարավոր էր, գնաց ռազմաճակատ, այցելեց Կարս, Սարիղամիշ։ Դիմեց զինվորներին, ոգևորեց նրանց. «... նայեցեք մեր այս գնդերին, որոնցով հպարտ ենք, որոնք մեր հաւատի աղբիւրներն են, մեր միակ ապաւէնը, նայեցեք մեկիկ-մեկիկ այս թխադէմ, մի փոքր մռայլ, միշտ խոհուն, զգաստ բրբրդոտ տղաներին, ողջ գիւղերից են, քրտինքի եւ ակօսի զաւակներ, մաճն ու բահը, մուրճն ու սալը թողած հրացանն են բռնել հայրենիքի եւ ազատութեան համար. .... որովհետեւ ահազանգն է հնչում հեռուներից եւ Աննիբալը մեր դռներն է խորտակում շառաջիւնով»[6]։

Ավարտվեց Առաջին համաշխարհային պատերազմը, խաղաղություն հաստատվեց, և արտակարգ լիազորություններով հայ բանաստեղծ-հրապարակախոսը մեկնեց Փարիզ, որպեսզի Խաղաղության վեհաժողովից պահանջի ճանաչել իր հայրենիքը ազատ, անկախ պետություն։ 1918 թ. Հայաստանի Հանրապետության Կառավարությունը իր պատվիրակությանը հրահանգ էր տվել Փարիզի վեհաժողովում պաշտպանելու միացյալ և անկախ Հայաստանի ստեղծման անհրաժեշտությունը, այսինքն՝ Անդրկովկասի հայկական շրջաններից և արևմտյան նահանգներից ստեղծել մեկ միասնական Հայաստան։

1919 թ. Ահարոնյանը ՀՀ խորհրդարանի անդամ էր, ապա՝ նախագահ։ Նա ՀՀ նախագահ էր ընտրվել ձևականորեն՝ միջազգային վեհաժողովներում նրա ձայնին առավել հեղինակություն հաղորդելու նպատակով[1]։ ՀՀ պատվիրակությունը համագործակցելու էր Պողոս Նուբար Փաշայի գլխավորած Արևմտահայ պատվիրակության հետ և միասնաբար պետք է պաշտպանեին Հայկական հարցը։ Եթե Ազգային պատվիրակությունը ուժեղ էր Հայկական հարցին առնչվող քաղաքական խնդիրների արծարծման մեջ և դրանց դիվանագիտական քննարկումների մեծ փորձ ուներ, ապա Ահարոնյանի գլխավորած ՀՀ պատվիրակության առավելությունն այն էր, որ պետություն էր ներկայացնում։

1919 թ. փետրվարի 12-ին հայկական երկու պատվիրակությունները Փարիզի Խաղաղության կոնֆերանսին ներկայացրին «Հայկական հարցը հաշտության վեհաժողովին

---

[6] «Հայրենիք», մայիս, 1930, N 7, էջ 75։

[1] Տե՛ս **Ա. Հակոբյան,** Հայաստանի խորհդարանը և քաղաքական կուսակցությունները 1918-1920 թթ., Եր., 2005, էջ 192։

առջև» վերնագրով համատեղ հուշագիր (memorandum), որով պահանջվում էր ստեղծել միացյալ և անկախ Հայաստան մեկ ամբողջական տարածքի վրա[2]։

Նախապես թվում էր, թե Ահարոնյանի գլխավորած պատվիրակությունը գուցե առաջին հերթին ստիպված լինի պայքարել, որպեսզի հսկայական զոհերի գնով Թուրքիայի ջախջախմանն իր նպաստը բերած Հայաստանի ենթադրելի ազատագրումը համաշխարհայնորեն ճանաչելի դառնա։ Սակայն դրանք արդեն դիվանագիտական ճակատամարտեր էին, ուր բարոյական հասկացությունները լավագույն դեպքում վերջին պլանում էին։

Պատվիրակությունը անհանգստության լուրջ հիմքեր չէր նկատում, քանի որ պատմական պահը բացառիկ նպաստավոր էր։ Բանակցությունների սեղանի շուրջ պետք է նստեին պատերազմում հաղթած Անտանտի երկրները, նրանց «փոքր դաշնակից» Հայաստանը և հաղթողների ողորմածությանը հանձնված Թուրքիան։ Հետևաբար՝ Հայաստանի համար կարող էին ծագել միայն տարածքային-սահմանային որոշ դժվարություններ, որոնք, իհարկե, հեշտ էր հաղթահարել պատմաէթնիկական, մշակութային և այլ բնույթի հանրահայտ փաստեր մեջտեղ բերելով։

Ճիշտ է, բացահայտ էր նաև հակասությունը Անտանտի պետությունների և խորհրդայնացած Ռուսաստանի միջև։ Բայց չէ՞ որ խորհրդային առաջին դեկրետներից մեկը Արևմտյան Հայաստանի ինքնորոշման իրավունքն էր հռչակում աշխարհով մեկ՝ խոստանալով ամեն ինչ անել դա կյանքի կոչելու համար։ Մինչդեռ առերևույթ դյուրին թվացող գործը ընդհանրապես դարձավ անհնարին։ Աստիճանաբար բացահայտվեց հաղթող-ների ագահության մոլուցքը, որի շրջապտույտներում անսպասելիորեն հայտնվեցին իրական հնարավորություններ քաղաքակրթության «չար ուժի»՝ Թուրքիայի համար։ Միջազգային վեհաժողովները, Սևրից հետո, մեկը մյուսի հետևից սառը ջուր մաղեցին հայոց ռոմանտիկ դիվանագիտության հավատի վրա՝ ազատագրական երազանքները տանելով փակուղի։

Հաղթանակած դաշնակիցների կողմից ի խաչ հանված Արևմտյան Հայաստանի համայնապատկերի վրա վեր բարձրացավ ևս մի չար աղետ, ուրվական՝ խորհրդային երկրի ազգությունների կոմիսարիատի ժողկոմ Ի.Ստալինի ընդգծված հակահայկական կողմնորոշումը։ Նա բոլոր հնարավոր միջոցներով ոչ միայն կարողացավ չեզոքացնել Ռուսաստանի հնարավոր դրական միջամտությունը արևմտահայության արդար դատին, այլև խաթարել նույնիսկ Արևելյան Հայաստանի տարածքային ամբողջականությունը։

Դեռ տաք էին Արևմտյան Հայաստանի հարյուր հազարավոր օջախների հրդեհների մոխիրները, չէր չորացել մորթված հայերի տաք արյունը, դեռ շարունակվում էին իրենց պատմական հայրենիքում ապրող ժողովրդի վերջին մնացուկների մոլագար սպանությունները, երբ Ստալինը մեջտեղ նետեց և «ապացուցեց» իր վայրագ տեսակետը թուրքերի դեմ հայերի իմպերիալիստական ձգտումների մասին։ Մեր կարծիքով՝ դեռևս ամբողջովին բացահայտված չեն չարահռչակ ժողկոմի մութ կապերը պանթուրքիզմի ղեկավարների հետ։ Սակայն ամենից առաջ նրա դիվական խարդավանքներին էր պարտական ջախջախված Թուրքիան, որը ստացավ անգամ մինչև պատերազմը Ռուսաստանի կազմի մեջ մտնող հայկական Կարսը, Արդահանը, Սուրմալուն և այլն, իսկ Նախիջևանը և Արցախը բռնապոկվեցին Հայաստանից և միացվեցին Ադրբեջանին։

Նկատի ունենալով այս իրավիճակը՝ անտեղի է կարծել, թե Ավետիս Ահարոնյանը և նրա ղեկավարած պատվիրակությունը ունեին գեթ ամենաչնչին հնարավորություն, որ չօգտագործեցին՝ ի բարին շրջելու հայոց բախտի անիվը։ Հայկական հարցի լուծումն արդեն

[2] Տե՛ս նույն տեղը, էջ 109։

դատապարտված էր ձախողման, և Ազգային պատվիրակության անարդյունք ջանքերն իմաստ ունեին լոկ պատմական հեռանկարի մեջ։

Վեհաժողովները պաշտոնապես ոչ միայն արձանագրեցին հայոց դատին վերաբերող բացահայտ իրողություններ, այլև ստեղծեցին անարդարության փաստաթղթեր, որոնք պիտանի պետք է լինեին պատմության ապագա անխուսափելի դատաստանի ժամանակ։

Ահարոնյանին է պատկանում հնգաբառ այս թևավոր խոսքը. «Ժամանակները կողոպտիչները եղան իմ ցեղի»։ Նա ձգտում էր հայոց ճակատագրի նկատմամբ խղճի ու արդարամտության օրենքների կիրառում հայցել գիշատչական բնազդներով շնչող ատյաններից։ Արդյունքում նորից մնաց դառը փորձը։

Հարց է ծագում։ Դիվանագե՞տ էր Ավետիս Ահարոնյանը։ Իհարկե, ո՛չ։ Սակարկությունները, երկար ու բարակ վիճաբանությունները մեծ պետությունների հետ արդեն հնարավոր չէին։ «Փոքր դաշնակից», ազատագրվող ազգերը չէին մասնակցում վեհաժողովի աշխատանքներին։ Չէին մասնակցում նույնիսկ Լեհաստանը, Չեխոսլովակիան, Հարավսլավիան։ Փոքր ազգերի ներկայացուցիչները հրավիրվում էին վեհաժողովի միայն այն ժամանակ, երբ պետք էր սեփական երկրների մասին ստույգ տեղեկություններ հաղորդել մեծ, իրավարար պետությունների ատյաններին։

Հայ դիվանագիտությունը հիմնականում քարոզչական աշխատանք էր կատարում՝ հայ դատի լուսաբանման, պահանջների արծարծման և արդարացման աշխատանք արևմտյան հանրային կարծիքի ձևավորման նպատակով ոչ միայն մամուլում ու ամեն տեսակ ժողովներում, այլև Փարիզի, Լոնդոնի, Հռոմի, Վաշինգտոնի և այլ վայրերի պաշտոնական շրջաններում։

Հետևաբար՝ միայն դիվանագետների բացակայությանը վերագրել Հայկական հարցի լուծման ձախողումը, ճիշտ չի լինի։ Պատվիրակության հիմնական խնդիրը Հայկական հարցի քարոզչությունն էր տեսակցություններով, հրապարակային բանախոսություններով, անձնական կապերով։ Եվ այդ ամենում անչափ կարևոր էր Ավետիս Ահարոնյանի դերը՝ իր սուր խոսքով, գրչով, հռետորական տաղանդով։ Ժամանակակիցների կարծիքով նա պատվիրակության կազմում աշխատում էր բոլորի փոխարեն, նախաձեռնում էր, ծրագրում, տարբեր անհատների, ատյանների դիմում բոլորից ավելի։

Ա.Ահարոնյանը, ըստ ընկերների բնութագրման, ջերմ հայրենասեր էր, քաջատեղյակ էր հայ ժողովրդի անցյալին, ներկային, կրակոտ էր իր ելույթներով, պերճախոս, ուստի ժամանակի հայ գործիչներից ոչ մեկը չէր կարող փոխարինել նրան։ Նա օտարներին սիրել էր տալիս Հայաստանն ու հայ ժողովրդին։ Վիկտոր Բերարը իր հրապարակային ելույթներից մեկի ժամանակ ասել է. «Ահարոնեաններ ծնող ազգը չի կարող կորուսուի...»։

Իր գործունեության ընթացքում Ահարոնյանին մտահոգող հարցերից մեկը հայկական գաղութների հետ սերտ համագործակցության ապահովումն էր։ Հայաստանի նորաստեղծ առաջին հանրապետությունը զարմանահրաշ երևույթ էր այդ ժամանակ։ Գաղութներում շատերը չէին հավատում, ոմանք էլ նվաստացուցիչ մակդիրներով էին որակում այն։ Կային ուժեղ նախապաշարումներ Առաջին հանրապետության հետ կապված, նույնիսկ այնքան ուժեղ, որ ոմանք պահանջում էին հայկական գաղութները ներկայացնող Փարիզի 1919 թ. Ազգային համագումարին ՀՀ պատվիրակության նախագահի և ներկայացուցիչների մասնակցություն՝ իբրև Անդրկովկասից եկած պատգամավորների, յուրաքանչյուրը նույնքան ձայնով ու կշռով, որքան ուներ, օրինակ՝ Իտալիայի 100-հոգանոց գաղութի պատգամավորը։

Այս և նման երևույթները, բնականաբար, վարկաբեկում էին Հայկական հարցը արևմտյան ազգերի աչքում։ Մինչդեռ անհրաժեշտ էր հարթել տարաձայնությունները, բոլոր հարցերի

շուրջ հանդես բերել գաղափարական ներդաշնակություն՝ մեկ ճակատով ներկայանալով արևմտյան իրավարար պետություններին։ Այդ դժվարին խնդիրը ևս փորձում էր լուծել ՀՀ պատվիրակությունը, հատկապես՝ նրա ղեկավարը։ Այլ հարց է, թե ինչպես և որքանով էր դա նրանց հաջողվում։

Միացյալ, անկախ Հայաստան էր պահանջվում ընդունել Փարիզի վեհաժողովը ներկայացնող մեծ պետություններից։ ՀՀ պատվիրակությունը Ա.Ահարոնյանի նախագահությամբ դա էր քարոզում՝ ամեն կերպ փորձելով չանջատել Հայաստանի երկու հատվածները, պատմությանը թողնել «ռուսահայ-թրքահայ» ածականները։

Այդ առիթով կարելի է հիշատակել Ահարոնյանի ճառը Փարիզի համագումարում, որտեղ նշվում էր, որ հիմնված է Հայաստանի Հանրապետություն (ոչ «ռուսահայ» կամ «թրքահայ») ամբողջ հայ ժողովրդի ջանքերով, կոչ էր արվում համախմբվել նրա դրոշի տակ։ Նա հանդիսականներին դիմեց հետևյալ խոսքերով. «Ես եմ ընտրուած նախագահելու Հ.Հ. պատուիրակութեան, ինձ են ղրկեր համերաշխելու գաղթաշխարհի հայութեան եւ Պօղոս Նուպարի պատուիրակութեան հետ, որովհետեւ ես աւելի թուրքահայ եմ, քան ռուսահայ...»[3]։

Հայոց երկու պատվիրակությունները Հայկական հարցի լուծման ուղղությամբ ծավալեցին անհուն եռանդ, ջանք չխնայեցին։ Ահարոնյանը և Պողոս Նուբարը համաձայնության եկան հիմնական սկզբունքների շուրջ, դիվանագիտական մեծ, դժվարին աշխատանք կատարեցին, և երբ հասավ պահը, երկուսով ներկայացան Փարիզի վեհաժողովին ու պաշտպանեցին հայության միասնական, հիմնական պահանջը՝ միացյալ և անկախ Հայաստան։

Հայկական հարցի ձախողման առնչությամբ դժգոհությունը, պարսավանքը, մեղադրանքը ավելի շատ Ահարոնյանի դեմ էր, քանի որ նա էր հայության պաշտոնական ներկայացուցիչը Փարիզում։ Ավետիս Ահարոնյանը այդ առումով արժանացավ Վենիզելոսի, Կլեմանսոյի, Լլոյդ Ջորջի և բազմաթիվ քաղաքական այլ գործիչների ճակատագրին, ովքեր փառքի բարձունքից հետո լքվեցին։ Նա համբերատար սպասեց, մինչև քաղաքական կրքերը հանդարտվեն։ Մարդիկ, ի վերջո, հասկացան և ընդունեցին այն պարզ ճշմարտությունը, որ հայ «տկար դիվանագիտության» ջանքերով Հայկական հարցը հասել է մինչև Սևր, և 1920 թ. օգոստոսի 10-ին Ահարոնյանը մեծ, դաշնակից պետությունների ներկայացուցիչների հետ ստորագրել է դաշնագիրը, որով Հայաստանը հռչակվում էր ազատ, անկախ և միացյալ։

«Կեանքիս ամենաերջանիկ օրն է այս,- գրում է Ա.Ահարոնյանը,- երեսուն տարուայ պայքարս, բողոքս, տառապանքս ու յոյսերս պսակուեցին փառաւոր յաջողութեամբ։ Թիւրքական դաշնագիրն ստորագրուեց եւ բոլոր դաշնակից պետութիւնների Համաժողովն այսպիսով հռչակեց Միացեալ, Անկախ, Ազատ Հայաստանը Սեվրի սրահում»[4]։

Եվ դա պետք է ամրագրվեր Վ.Վիլսոնի գծած սահմաններում։ Ա.Ահարոնյանը հեռագրում է Փարիզից, որ ԱՄՆ-ի նախագահ Վիլսոնը ընդունել է

Հայաստանի սահմանները որոշելու իրավարարությունը[5]։

Այդ առնչությամբ Ահարոնյանը գրում է. «Մենք հաւատացած ենք, որ մեր դաշնակիցները մեզ կը տան մեր քանդուած ու աւեր հայրենիքը։ Եւ այդ իրաւունքը ազատութեան, հայ ազգը

[3] «Հայրենիք», մայիս, 1930, N 7, էջ 77։
[4] **Ա. Ահարոնեան,** Սարդարապատից մինչև Սեիր եւ Լօզան» (Քաղաքական օրագիր), Պոսթըն, 1943, էջ 88։
[5] Տե՛ս «Ժողովուրդ», 23 հունիսի 1920, N 97։

ձեռք է բերել հինգ դարերի տառապանքի, 30 տարուայ պայքարի եւ վեց տարյա պատերազմի գնով»[6]։

Փաստորեն, կարելի է համարել, որ դրանով հայկական միացյալ պատվիրակությունը լիովին կատարել էր հիմնական պատվերը, որ Հայաստանի Կառավարությունը տվել էր իր ներկայացուցչին։

Այլ հարց է, թե ինչո՞ւ չիրագործվեց Սևրի դաշնագիրը, այլ մնաց որպես «մեռած տառ»։

Հնարավո՞ր էր արդյոք այլ ելք գտնել, առաջն առնել այդ անհաջողության։ Հայ քաղաքագետները կարո՞ղ էին գուշակել ու կանխել դա։ Մի՞թե հայ պատվիրակները ձախողեցին Հայկական հարցի լուծումը։ Այդ առնչությամբ հիշատակության արժանի է վեհաժողովի հեղինակավոր անդամներից մեկի՝ Օրլանդոյի՝ 1921 թվականի ամռանը Իտալիայի խորհրդարանում տեսակցության ժամանակ արտահայտած հետևյալ միտքը. «... ոչ մի ճնշուած ժողովուրդի դատ չէր ներկայանար Վեհաժողովին այնքան բախտաւոր պարագաներու տակ. ամէն ինչ պատրաստուած, ձեւակերպուած էր (Միացեալ, անկախ Հայաստանը) ընդհանուր, միահամուռ համաձայնութեամբ եւ մէկէն ի մէկ ամբողջ գործը փլեցաւ ...Ապշեցուցիչ է»[7]։

Ավետիս Ահարոնյանն էլ լավատես էր բոլորի նման. հավատաց ամերիկյան մանդատին, թե՝ ԱՄՆ-ի նախագահը պիտի իրագործի Սևրի դաշնագրով նախատեսված մեծ Հայաստանի ստեղծումը։ Նրա նման ամերիկյան մանդատին հավատացին Պողոս Նուբարը, նույնիսկ արևմտահայ գործիչների ամենափորձված, ճանաչված դիվանագետը՝ Գաբրիել Նորա-տունկյանը, ով մինչ այդ մշտապես հորդորում էր «Ֆրանսիայի փեշից բռնել», նրան վստահել և՛ Հայկական հարցի լուծումը, և՛ հայկական մանդատը։

Վիլսոնյան մանդատին հավատում էին նաև մեծ, դաշնակից երկրների կառավարությունները։ Այդ ընդհանուր հավատը միգուցե ամենաաղետալին եղավ Հայկական հարցի համար։

«Ամերիկեան սենատը 233 ձայնով, ընդդեմ 62-ի մերժել է մանդատը Հայաստանի վրայ»[8]։ Ահա թե ինչու հուսահատված, մեծ պետությունների նոր քաղաքականությունը նկատի ունենալով՝ Լեոն ասում էր. «... այլևս ոչ մի հավատ չունեմ մեր հարցի մասին և բոլորովին անմիտ, վնասակար եմ գտնում Փարիզի երկու պատվիրակությունների գործունեությունը Ամերիկա կամ Պապին դիմումները մամուլին այդ բոզերի ոհմակին ... դիմումներն ու կոկորդիլոսի արցունքները, հայասերների ճառերը և Ազգերի լիգայի կեղծավորությունը ... Վերջացած է ամեն ինչ ... նոր ուղիներ պիտի փնտրել»[9]։

Ինչպես վկայում են ժամանակակիցները, Ահարոնյանը Սևրի դաշնագրի ձախողումից հետո էլ շարունակեց մասնակցել միջպետական խորհրդաժողովներին՝ ձգտելով թեկուզ մի փոքրիկ մասնիկը իրագործել տալ, գոնե «Ազգային օջախը». ՀՕՄ-ը իրականացնել։ Նա նորից եղավ Փարիզում, Լոնդոնում, Ժնևում, Հռոմում, դարձյալ Լոնդոնում, Ժնևում, դաշնակիցների մոտ, սակայն ապարդյուն։

Չնայած բոլոր անհաջողություններին, Ահարոնյանը, այնուամենայնիվ, սրտի խորքում անսահման լավատեսություն ուներ, հավատ՝ իր ազգի ապագայի նկատմամբ։ Ուստի գրում

---

[6] **Ա. Ահարոնեան,** «Սարդարապատից մինչև Սեիր եւ Լօզան», նշվ. հրատ., էջ 111։
[7] «Հայրենիք», մայիս, 1930, N 7։
[8] «Ժողովուրդ», 6 հունիսի 1920, N 91։
[9] **Լեո**, Անցյալից, Հայոց հարցը, Թիֆլիս, 1925, էջ 137։

էր. «Գնա՛, գնա՛ հայ ժողովուրդ, քալէ ... Դեռ սպառուած չեն մեր յոյսերը, դեռ կորած չէ մեր Հայրենիքը... Մենք դեռ կը պայքարենք եւ պիտի յաղթենք»[10]:

Ավետիս Ահարոնյանը ոչ միայն գրող էր, ազգային, քաղաքական գործիչ, այլև, ըստ ժամանակակիցների, մեծ հռետոր: 1934 թ. Մարսելում իր հրապարակային մի ելույթի ժամանակ նա կաթվածահար եղավ, 14 տարի տառապելուց հետո մահացավ և 1948 թ. ապրիլի 20-ին թաղվեց Փարիզի Պեր Լաշեզ գերեզմանատանը:

Գնահատելով Ա.Ահարոնյանի ազգանվեր գործունեությունը՝ Հակոբ Քիֆեճյանը (Հ.Օշական) գրել է. «Ահարոնեան մեծագույն փարոսներէն մեկն է ապրող հայութեան: Միակ դէմքն է ան, որուն ճառագայթումն դեռ ոչ մէկուն անհաճոյ ըլլալու պարագաները ցոյց տուած ըլլայ»[11]:

Շարունակելով Ահարոնյանի լավատեսությունը իր ազգի ապագայի, հայ դատի արդարացի լուծման վերաբերյալ՝ Ս.Վրացյանը գրում է. «Ժամանակները հղի են դեպքերով: Պատմությունը վերջացած չէ: Մենք հավատում ենք, որ Հայաստանը նորից կլինի ազատ և անկախ, ավելի լայն ազգային սահմաններով: Ընդունակ տեղ տալու իր ծոցում ի սփյուռս աշխարհի հողմացրիվ եղած բոլոր զավակներին»[12]:

Այսօր էլ «Հայ ժողովուրդը Արդարութեան պահանջ ունի: Իրաւատէր կը ներկայանայ հայրենի իր հողերուն, որոնք տակաւին կը մնան թրքական բռնագրաւումի տակ»[13]:

Մինչև գիտակցական կյանքի վերջը Ահարոնյանը հավատարիմ մնաց իր քաղաքական հայացքներին, պայքարի նպատակին և հայ ժողովրդի ձգտումներին: Նա այդ ժամանակաշրջանի քաղաքական ռոմանտիզմի ամենաողբերգական ներկայացուցիչն էր: Ամեն կերպ փորձում էր հայ ժողովրդի ճակատագրի նկատմամբ խղճի, արդարամտության օրենքների կիրառում հայցել գիշատչական բնազդներով օժտված մեծ պետությունների ատյաններից: Ճշմարտությունն այն է, որ Ահարոնյանը չհաշտվեց կատարված պատմական անարդարության՝ Արևմտյան Հայաստանի կորստի հետ՝ հույս ունենալով, որ մի օր կգա հարցի օբյեկտիվ գնահատման ժամանակը:

---

[10] «Հայրենիք», մայիս, 1930, N 7, էջ 79:
[11] **Գ. Լազյան,** նշվ. աշխ., էջ 196:
[12] **Ս. Վրացյան,** Հայաստանի Հանրապետություն, Եր., 1993, էջ 609:
[13] «Դրօշակ», 30 ապրիլ 1986: